ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կողմից 2018 թվականի 2-րդ եռամսյակում 190/18 ծածկագրով «Տաթև ՀԷԿ-ի տանիքի նորոգման աշխատանքներ» մրցույթի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2018

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները

<u>Մոնիթորինգի իրականացման հիմքը՝</u> ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում 1) հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

<u>Մոնիթորինգի օբյեկտը՝</u> «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ (այսուհետ նաև Ընկերություն):

<u>Մոնիթորինգի առարկան՝</u> Ընկերության կողմից 2018 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

<u>Մոնիթորինգի նպատակը՝</u> Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում 2) սահմանված լրացուցիչ պահանջներին:

<u>Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝</u> 2018 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև 2018 թվականի նոյեմբերի 30-ը:

<u>Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝</u> Ընկերության գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

«Տաթև ՀԷԿ-ի տանիքի նորոգման աշխատանքներ» բաց մրցույթ

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն հիմք ընդունելով Ընկերության կողմից հաստատված գնումների կարգի 7.4.2 կետը կազմակերպել և անցկացրել է «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ կարիքների համար Տաթև ՀԷԿ-ի տանիքի նորոգման աշխատանքների ձեռքբերման բաց մրցույթ:

Հայտարարությունը ՀՀ ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում հրապարակվել է 2018 թվականի մարտի 22-ին՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2018 թվականի ապրիլի 9-ը:

Մրցույթի հայտարարումից հետո բաց առաջարկների հարցման հրավերին համապատասխան կարգով հայտ է ներկայացրել 10 մասնակից՝ «Ճանշինտեխնախ» ՍՊԸ-ն, «123» ՍՊԸ-ն, «Դելտա Գլոուբ» ՍՊԸ-ն, «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ն, «Դակշին» ՍՊԸ-ն, «Ոսմար» ՍՊԸ-ն, «Բլեսկ» ՍՊԸ-ն, «Կոսմես» ՍՊԸ-ն, «Զանգեզուր ԷՑՇ» ՍՊԸ-ն և «Մեգապոլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն:

2018 թվականի ապրիլի 9-ին կայացած տեխնիկական առաջարկների գնահատման նիստի ընթացքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակիցների ներկայացրած տեխնիկական առաջարկներից երկուսը՝ «Կոսմես» ՍՊԸ-ի և «Զանգեզուր ԷՑՇ» ՍՊԸ-ի, գնահատվել են որպես հրավերի և գնումների ուղեցույցի պահանջներին ոչ համապատասխան և մերժվել են՝ համապատասխան մասնագիտական փորձառություն չունենալու և կապալառուի ԱՊՏԱ գնահատման «Ա» դասին չհամապատասխանելու պատճառով: Հարկ է նշել, որ «Զանգեզուր ԷՑՇ» ՍՊԸ-ի հայտը մերժելու ընկերության պարզաբանումը ընդունելի չէ, քանի որ ԱՊՏԱ և ՇՄ ստուգաթերթերի, աշխատանքի անվտանգության վերլուծությունների և աշխատանքների կատարման նախագիծ ձևաթղթերի թերություններ կան նաև այլ մասնակիցների մոտ, որոնց հնարավորություն է տրվել մասնակցել մրցույթի հաջորդ փուլին: Նշված փաստաթղթերի ներկայացման պահանջը պետք է ապահովվեր մրցույթի բոլոր մասնակիցների կողմից:

Մյուս 8 մասնակիցների կողմից ներկայացված տեխնիկական առաջարկները գնահատվել են որպես հրավերի և գնումների ուղեցույցի պահանջներին համապատասխան և հնարավորություն է տրվել մասնակցել էլեկտրոնային

եղանակով գնային առաջարկ ներկայացնելու փուլին: Ներկայացված գնային առաջարկները բերված են ստորև.

Ընկերության անվանումը	**Ներկայացված գնային առաջարկները հազ. դրամ (առանց ԱԱՀ)**
1	**2**
«Ոսմար» ՍՊԸ	32 920,0
«123» ՍՊԸ	23 400,0
«Ճանշինտեխնախ» ՍՊԸ	24 200,0
«Դելտա Գլոուբ» ՍՊԸ	23 300,0
«Դավիթ Էներջի» ՍՊԸ	24 700,0
«Դակշին» ՍՊԸ	91 295,1
«Բլեսկ» ՍՊԸ	41 483,9
«Մեգապոլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ	92 618,4

Հաղթող է ճանաչվել «Դելտա Գլոուբ» ՍՊԸ-ն՝ հայտի գինը 23 300 հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: Պայմանագիրը կնքվել է 2018 թվականի մայիսի 29-ին՝ 23,3 մլն դրամ՝ առանց ԱԱՀ, արժեքով: Մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման պահից 60 օրացուցային օր:

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կարիքների համար «Տաթև ՀԷԿ-ի տանիքի նորոգում» բաց մրցույթի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել որ.

1. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն գնման ընթացակարգի փաստաթղթերը և կատարվելիք աշխատանքների բնութագրերը կազմել է պատշաճ մակարդակով:
2. «Զանգեզուր ԷՑՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական առաջարկը գնահատվել է որպես հրավերի և գնումների ուղեցույցի պահանջներին ոչ համապատասխան և մերժվել է՝ կապալառուի ԱՊՏԱ գնահատման Ա դասին չհամապատասխանելու պատճառով: Հարկ է նշել, որ ԱՊՏԱ և ՇՄ ստուգաթերթերի, աշխատանքի անվտանգության

վերլուծությունների և աշխատանքների կատարման նախագիծ ձևաթղթերի թերություններ կան նաև այլ մասնակիցների մոտ, որոնց հնարավորություն է տրվել մասնակցել մրցույթի հաջորդ փուլին: Նշված փաստաթղթերի ներկայացման պահանջը պետք է ապահովվեր մրցույթի բոլոր մասնակիցների կողմից:

3. Պայմանագրով սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ:

Այս համատեքստում հարկ է նշել, որ գնումների գործընթացների թերի կազմակերպման արդյունքում շուկայականից բարձր գներով ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքները (շուկայական գները գերազանցող չափով) հաշվի չեն առնվի ընկերության սակագներում:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

Ընկերության անվանում «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ

Գնման անվանումը «Տաթև ՀԷԿ-ի տանիքի նորոգում»

Գնման ծածկագիրը 190/18

Գնման ձևը Բաց մրցույթ

ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
1	Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և մոնիթորինգ իրականացնելու համար բավարար տեղեկատվություն են պարունակում	☑	☐	☐	

ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
2	Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը	☑	☐	☐	
3	Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել	☑	☐	☐	
4	Մինչև գնումների հրավերների հրապարակելն իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն	☐	☐	☑	Ընկերությունը կազմել է նախահաշիվ հաշվի առնելով քաղաքաշինության ոլորտում գործող նորմերը և գները:

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
	(փաստաթղթերը կցված են)				
5	**Գնման գործընթացի արդյունավետ իրականացման, ոչ մրցութային եղանակով գնումների ծավալի նվազեցման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրուում հրապարակելուց բացի դիմե՞լ է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար**	☑	☐	☐	Հայտարարությունը հրապարակվել է նաև www.tender.am կայքում և «Հայկական ժամանակ» օրաթերթում:
6	**Մասնակից մատակարարների հայտերի ընդունման գործընթացում ապահովվել է արդարությունն ու անկողմնակալությունը**	☐	☐	☑	«Զանգեզուր ԷՑՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական առաջարկը գնահատվել է որպես հրավերի և գնումների ուղեցույցի պահանջներին ոչ համապատասխան և մերժվել է՝ կապալառուի ԱՊՏԱ գնահատման Ա դասին չհամապատասխանելու պատճառով: Հարկ է նշել, որ ԱՊՏԱ և ՇՄ ստուգաթերթերի, աշխատանքի անվտանգության վերլուծությունների և աշխատանքների կատարման նախագիծ ձևաթղթերի թերություններ կան նաև այլ մասնակիցների մոտ, որոնց հնարավորություն է տրվել մասնակցել մրցույթի հաջորդ փուլին: Նշված փաստաթղթերի ներկայացման պահանջը պետք է ապահովվեր մրցույթի բոլոր մասնակիցների կողմից:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
7	**Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար**	☐	☑	☐	

8	Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը	☐	☑	☐
9	Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է	☑	☐	☐
10	Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը	☑	☐	☐
11	Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը, իսկ աշխատանքների կամ ծառայությունների դեպքում՝ ամբողջական նկարագրությունը	☑	☐	☐
12	Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը	☑	☐	☐
13	Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի	☐	☑	☐

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
14	Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ	☐	☑	☐	

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
15	**Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին**	☐	☑	☐	
16	**Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը**	☐	☐	☑	Ընկերությունը կազմել է նախահաշիվ հաշվի առնելով քաղաքաշինության ոլորտում գործող նորմերը և գները:
17	**Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)**	☑	☐	☐	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
18	**Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ**	☑	☐	☐	
19	**Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով**	☑	☐	☐	Պայմանագրի կատարման ժամկետ է սահմանված պայմանագրի կնքման պահից 60 օր: Պայմանագիրը կնքվել է 29.05.18-ին: Հետագայում կնքվել է լրացուցիչ համաձայնագիր՝ պայմանագրի կատարման ժամկետը տեղափոխելով մինչև հոկտեմբերի 25-ը:
20	**Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին**	☐	☐	☑	Ընկերությունը կազմել է նախահաշիվ հաշվի առնելով քաղաքաշինության ոլորտում գործող նորմերը և գները: